ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

-- մայիսի 2024 թվականի №---Ա

«ՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՏՈՒԳԱՆՔ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) «Հաշվարկային կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ Շուկայի օպերատոր) 2024 թվականի փետրվարի 13-ի №ՄՄ/30-24 գրությամբ դիմել է Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով)՝ բարձրացնելով հարցեր՝ մատակարարման լիցենցիա ունեցող անձանց (այսուհետ՝ Մատակարար) հաշվեկշռման խմբում նոր սպառողների ընդգրկման, այդ սպառողների սպառման համակարգերի ակտիվ հզորությունների ամրագրման և վերջիններիս մասով Մատակարարների կողմից ուղիղ պայմանագրերի շուկայի կարգավորվող բաղադրիչից (այսուհետ՝ ԿՈՒՊ բաղադրիչ) ձեռք բերվող էլեկտրական էներգիայի քանակի առնչությամբ: Մասնավորապես, «Ռիքաստ» և «Տ-Մետալ» փակ բաժնետիրական ընկերությունները, լինելով էլեկտրական ցանցին միացվող նոր սպառման կետեր, իրենց Մատակարարներին հնարավորություն են տվել ԿՈՒՊ բաղադրիչից յուրաքանչյուր ժամում ձեռք բերել յուրաքանչյուր սպառման համակարգի համար ամրագրված առավելագույն հզորության չափով էլեկտրաէներգիա: Մինչդեռ, ունենալով 20 ՄՎտ ամրագրված հզորություն՝ «Ռիքաստ» սպառման կետի 2023 թվականի հոկտեմբեր ամսվա միջին ժամային սպառումը կազմել է 4796 կՎտժ, նոյեմբեր ամսվա միջին ժամային սպառումը՝ 6878 կՎտժ, դեկտեմբեր ամսվա համար՝ 10 968 կՎտժ, 2024 թվականի հունվար ամսվա միջին ժամային սպառումը՝ 14 617 կՎտժ: «Տ-Մետալ» փակ բաժնետիրական ընկերությունը, ունենալով 60 ՄՎԱ ամրագրված հզորություն, 2024 թվականի փետրվար ամսին ընդհանրապես սպառում չի ունեցել,

բ) Մատակարարի հաշվեկշռման խումբ սպառողների ընդգրկման (էլեկտրական ցանցին միացած նոր սպառողների մասով) և շուկայի ԿՈՒՊ բաղադրիչից էլեկտրական

էներգիայի ձեռքբերման գործընթացի՝ Հանձնաժողովի 2019 թվականի դեկտեմբերի 25-ի №516-Ն որոշմամբ հաստատված էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայի առևտրային կանոններին (այսուհետ՝ ԷՄՇ կանոններ) համապատասխանությունը ստուգելու նպատակով, ինչպես նաև հիմք ընդունելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետը՝ Հանձնաժողովը 2024 թվականի մարտի 6-ից հարուցել է վարչական վարույթ, որի վերաբերյալ Շուկայի օպերատորը ծանուցվել է Հանձնաժողովի 2024 թվականի մարտի 5-ի №ԳԲ/34.3-Ղ4-4/930-2024 գրությամբ, իսկ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերությունը՝ նույն օրվա №ԳԲ/34.3-Ղ4-4/932-2024 գրությամբ: Միաժամանակ, Շուկայի օպերատորից և «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերությունից պահանջվել է ներկայացնել 2023 թվականի փետրվարի 1-ից Մատակարարի խումբ ընդգրկված՝ էլեկտրական ցանցին միացած նոր սպառողների մասով տեղեկատվություն, այդ թվում՝ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերությունից պահանջվել է ներկայացնել նաև այդ սպառողների միացման գործընթացին առնչվող հիմնավորումները,

գ) Շուկայի օպերատորը 2024 թվականի մարտի 14-ի №91ՄՄ գրությամբ ներկայացրել է իր պարզաբանումները, մասնավորապես՝ նշելով, որ Մատակարարների հաշվեկշռման խումբ նոր սպառողների գրանցման ընթացակարգն իրականացրել է ԷՄՇ կանոնների գործող կարգավորումներին համաձայն, և բաշխողի հաստատումներն ստանալուց հետո միայն սպառման կետերն ակտիվացել են շուկայում,

դ) «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերությունը 2024 թվականի մարտի 18-ի №Ե-503-24 գրությամբ ներկայացրել է իր պարզաբանումները՝ տեղեկացնելով, որ «Տ-Մետալ» փակ բաժնետիրական ընկերությունը միացված է հաղորդողի 220 կՎտ ցանցին և ընկերությունը հասանելիություն և որևէ առնչություն չի ունեցել քննարկվող սպառողի տեխնիկական պայմանների տրամադրման ու լարման տակ դնելու թույլտվության վերաբերյալ փաստաթղթերին: Ըստ այդմ, վերջինս շուկայի օպերատորին տրամադրել է միայն հաշվառման համալիրների հասանելիությունը: «Դիջիդաթա» փակ բաժնետիրական ընկերության (անվանափոխվել է «Ռիքաստ» սպառման կետ) միացման գործընթացին առնչվող հիմնավորումների վերաբերյալ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերությունը տեղեկացրել է, որ վերջինս 2023 թվականի սեպտեմբեր ամսից միացել է բաշխման ցանցին որպես իր

սպառող՝ գրությանը կից ներկայացնելով հիշյալ սպառողի 20 Մվտ հզորությամբ էլեկտրաէներգիայի սպառման տեխնիկական պայմանները,

ե) Հանձնաժողովի 2024 թվականի մարտի 21-ի համապատասխանաբար №ԳԲ/34.3-Ղ4-4/1161-2024 և №ԳԲ/34.3-Ղ4-4/1166-2024 գրություններով «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերությունից և Շուկայի օպերատորից պահանջվել է Հանձնաժողով ներկայացնել 2023 թվականի փետրվարի 1-ից հետո էլեկտրաէներգետիկական շուկայի մրցակցային հատվածում գործող և մրցակցային շուկա մուտք գործելու ամսվան նախորդող 12 ամսում հաղորդման և բաշխման ցանցին նոր միացած սպառողների (այսուհետ՝ Նոր սպառողներ) ցանկը, վերջիններիս սպառման համակարգի էլեկտրական ցանցին միացման ակտիվ հզորությունը, միացման դիմումին կից փաստաթղթերում և միացման պայմանագրում նշված՝ կանխատեսվող էլեկտրական էներգիայի սպառման ծավալների մասին ամսական տվյալները, ինչպես նաև ցանցին փաստացի միացման հիմքերը, այդ թվում՝ օրենսդրությամբ նախատեսված դեպքում՝ գործարկման եզրակացությունը,

զ) «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության կողմից 2024 թվականի մարտի 27-ի №Ե-651-24 գրությամբ Հանձնաժողով է ներկայացվել բաշխման ցանցին միացած թվով 10 Նոր սպառողների ցանկը՝ «ԵՎՐՈՊԼԱՍՏ 999» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն, ԳԱԼԱՉՅԱՆ ՀԵՂԻՆԵ ՄԿՐՏԻՉԻ (Մատակարար՝ «Էներէքս» փակ բաժնետիրական ընկերություն), «ՍՊԱՅԿԱ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն (Բագրատունյաց 70/11, Շենիկ), «ՐԻՔԱՍՏ» փակ բաժնետիրական ընկերություն (նախկինում՝ «Դիջիդաթա» փակ բաժնետիրական ընկերություն), «Արթ Գա» ՍՊԸ, «Դի Վի էյչ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն, ԱՇԽԲԱԲՅԱՆ ՀԱՄԼԵՏ (Մատակարար՝ «Էներջի Պրովայդեր» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն), «ԷԼԻԶԱՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն, «ՎԱՀԵԹ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն (Մատակարար՝ «Էներջի Սփփլայ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն),

է) «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» փակ բաժնետիրական ընկերությունը 2024 թվականի մարտի 28-ի №04/10.9/1523-2024 գրությամբ տեղեկացրել է, որ 2023 թվականի փետրվարի 1-ից մինչև 2024 թվականի մարտի 21-ն ընկած ժամանակահատվածում

հաղորդման ցանցին միացել է բաշխողի միայն մեկ ուղղություն՝ «ԵՎՐՈՊԼԱՍՏ 999» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը,

ը) Հանձնաժողովի 2024 թվականի մարտի 28-ի №ՍՇ/34.3-Ղ4-4/1281-2024 գրությամբ Շուկայի օպերատորից պահանջվել է Հանձնաժողով ներկայացնել տեղեկատվություն ԿՈՒՊ բաղադրիչում Մատակարարների կողմից Նոր սպառողների մասով ըստ ամիսների (շուկա մուտք գործելու պահից սկսած) ներկայացված հայտերի ծավալների մասին,

թ) Շուկայի օպերատորը 2024 թվականի ապրիլի 4-ի №123ՄՄ գրությամբ Հանձնաժողով է ներկայացրել ԿՈՒՊ բաղադրիչում Մատակարարների կողմից ըստ ամիսների ներկայացված հայտերի ծավալների մասին տեղեկատվություն, համաձայն որի, մասնավորապես՝

- «Էներէքս» փակ բաժնետիրական ընկերությունը 2023 թվականի փետրվարից մինչև 2024 թվականի մարտ ամիսը ներառյալ ըստ ամիսների ԿՈՒՊ բաղադրիչում էլեկտրական էներգիայի ձեռքբերման համար ներկայացրել է համապատասխանաբար փետրվար ամսին՝ 2075190 կՎտժ (բաշխվել է 973018 կՎտժ), մարտ ամսին՝ 2215209 կՎտժ (բաշխվել է 1143705 կՎտժ), ապրիլ ամսին՝ 2167625 կՎտժ (բաշխվել է 1287760 կՎտժ), մայիս ամսին՝ 2684980 կՎտժ (բաշխվել է 647051 կՎտժ), հունիս ամսին՝ 3273693 կՎտժ (բաշխվել է 384470 կՎտժ), հուլիս ամսին՝ 3593070 կՎտժ (բաշխվել է 1686952 կՎտժ), օգոստոս ամսին՝ 4466466 կՎտժ (բաշխվել է 2468848 կՎտժ), սեպտեմբեր ամսին՝ 4381288 կՎտժ (բաշխվել է 2518568 կՎտժ), հոկտեմբեր ամսին՝ 4511086 կՎտժ (բաշխվել է 2304249 կՎտժ), նոյեմբեր ամսին՝ 5224945 կՎտժ (բաշխվել է 2033985 կՎտժ), դեկտեմբեր ամսին՝ 5822944 կՎտժ (բաշխվել է 3045412 կՎտժ), 2024 թվականի հունվար ամսին՝ 5440729 կՎտժ (բաշխվել է 2566036 կՎտժ), 2024 թվականի փետրվար ամսին՝ 6098343 կՎտժ (բաշխվել է 2840001 կՎտժ) և 2024 թվականի մարտ ամսին՝ 7868765 կՎտժ (բաշխվել է 4189354 կՎտժ) էլեկտրական էներգիայի գնման հայտ,
- «Էներջի Սփփլայ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը 2023 թվականի փետրվարից մինչև 2024 թվականի մարտ ամիսը ներառյալ ըստ ամիսների ԿՈՒՊ բաղադրիչում էլեկտրական էներգիայի ձեռքբերման համար ներկայացրել է համապատասխանաբար փետրվար ամսին՝ 6895392 կՎտժ (բաշխվել է 3066388 կՎտժ), մարտ ամսին՝ 7428048 կՎտժ (բաշխվել է 7428048 կՎտժ), ապրիլ ամսին՝ 21173040 կՎտժ (բաշխվել է 12778436 կՎտժ), մայիս ամսին՝ 23488080 կՎտժ (բաշխվել է 4778109

կՎտժ), հունիս ամսին՝ 28583850 կՎտժ (բաշխվել է 3455025 կՎտժ), հուլիս ամսին՝ 31306094 կՎտժ (բաշխվել է 9360849 կՎտժ), օգոստոս ամսին՝ 36723096 կՎտժ (բաշխվել է 19290938 կՎտժ), սեպտեմբեր ամսին՝ 47808054 կՎտժ (բաշխվել է 27015994 կՎտժ), հոկտեմբեր ամսին՝ 47397990 կՎտժ (բաշխվել է 25000508 կՎտժ), նոյեմբեր ամսին՝ 47299318 կՎտժ (բաշխվել է 17604704 կՎտժ), դեկտեմբեր ամսին՝ 51860009 կՎտժ (բաշխվել է 25559635 կՎտժ), 2024 թվականի հունվար ամսին՝ 43056009 կՎտժ (բաշխվել է 19176922 կՎտժ), 2024 թվականի փետրվար ամսին՝ 82475003 կՎտժ (բաշխվել է 36338467 կՎտժ) և 2024 թվականի մարտ ամսին՝ 51597990 կՎտժ (բաշխվել է 25693772 կՎտժ) էլեկտրական էներգիայի գնման հայտ,

- «Էներջի Պրովայդեր» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը 2023 թվականի փետրվարից մինչև 2024 թվականի մարտ ամիսը ներառյալ ըստ ամիսների ԿՈՒՊ բաղադրիչում էլեկտրական էներգիայի ձեռքբերման համար ներկայացրել է համապատասխանաբար փետրվար ամսին՝ 2672164 կՎտժ (բաշխվել է 1188870 կՎտժ), մարտ ամսին՝ 2714331 կՎտժ (բաշխվել է 1267225 կՎտժ), ապրիլ ամսին՝ 2107493 կՎտժ (բաշխվել է 1265606 կՎտժ), մայիս ամսին՝ 2097088 կՎտժ (բաշխվել է 436785 կՎտժ), հունիս ամսին՝ 1987053 կՎտժ (բաշխվել է 230978 կՎտժ), հուլիս ամսին՝ 2767087 կՎտժ (բաշխվել է 823942 կՎտժ), օգոստոս ամսին՝ 2419608 կՎտժ (բաշխվել է 1209031 կՎտժ), սեպտեմբեր ամսին՝ 2835696 կՎտժ (բաշխվել է 1510755 կՎտժ), հոկտեմբեր ամսին՝ 3713134 կՎտժ (բաշխվել է 1831490 կՎտժ), նոյեմբեր ամսին՝ 10209847 կՎտժ (բաշխվել է 2265427 կՎտժ), դեկտեմբեր ամսին՝ 7920611 կՎտժ (բաշխվել է 3356200 կՎտժ), 2024 թվականի հունվար ամսին՝ 9743000 կՎտժ (բաշխվել է 4228540 կՎտժ), 2024 թվականի փետրվար ամսին՝ 13341237 կՎտժ (բաշխվել է 6177785 կՎտժ) և 2024 թվականի մարտ ամսին՝ 15259404 կՎտժ (բաշխվել է 7780563 կՎտժ) էլեկտրական էներգիայի գնման հայտ,

ժ) Հանձնաժողովի 2024 թվականի մայիսի 6-ի №ԳԲ/34.3-Ղ4-4/1882-2024 գրությամբ «Էներէքս» փակ բաժնետիրական ընկերությունից, №ԳԲ/34.3-Ղ4-4/1883-2024 գրությամբ «Էներջի Պրովայդեր» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունից և №ԳԲ/34.3-Ղ4-4/1884-2024 գրությամբ «Էներջի Սփփլայ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունից պահանջվել է ներկայացնել տեղեկատվություն՝ Մատակարարի խումբ ընդգրկված Նոր սպառողների՝ ԷՄՇ կանոնների 63-րդ կետի 6-րդ ենթակետի համաձայն ներկայացվող սպառման համակարգի էլեկտրական ցանցին

միացման ակտիվ հզորության, ինչպես նաև ԷՄՇ կանոնների 121-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն ներկայացվող՝ միացման դիմումին կից փաստաթղթերում և միացման պայմանագրում նշված՝ կանխատեսվող էլեկտրական էներգիայի սպառման ամսական ծավալների վերաբերյալ,

ժա) 2024 թվականի մայիսի 10-ի №01-05/10 գրությամբ «Էներէքս» փակ բաժնետիրական ընկերությունը, 2024 թվականի մայիսի 13-ի գրությամբ «Էներջի Սփփլայ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը և 2024 թվականի մայիսի 13-ի №ԷՊ-025 գրությամբ «Էներջի Պրովայդեր» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը պարզաբանում և տեղեկատվություն են ներկայացրել իրենց հաշվեկշռման խմբում գտնվող Նոր սպառողների սպառման համակարգերի էլեկտրական ցանցին միացման ակտիվ հզորության, ինչպես նաև ԿՈՒՊ բաղադրիչում էլեկտրական էներգիայի ձեռքբերման նպատակով իրենց կողմից ներկայացվող էլեկտրական էներգիայի գնման հայտերի քանակների վերաբերյալ,

ժբ) ԷՄՇ կանոնների 61-րդ կետի 11-րդ ենթակետի համաձայն՝ էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկային (այսուհետ՝ ԷՄՇ) մասնակցելու նպատակով Մատակարարը շուկայի կառավարման ծրագրում (այսուհետ՝ ՇԿԾ) գրանցման հայտ բացելիս, ի թիվս այլ տեղեկատվությունների և փաստաթղթերի, ներկայացնում է տեղեկատվություն նաև սպառման համակարգի էլեկտրական ցանցին միացման հզորության վերաբերյալ,

ժգ) ԷՄՇ կանոնների 63-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ ԷՄՇ մասնակիցը ՇԿԾ-ում գրանցման հայտ բացելիս, եթե գտնվում է հաղորդման կամ բաշխման ցանցին միացման գործընթացում, ի թիվս այլ տեղեկատվությունների և փաստաթղթերի, կցում է նաև բաշխման ցանցին միացման պայմանագիրը կամ կարգավիճակի վերաբերյալ հիմնավորումը,

ժդ) ԷՄՇ կանոնների 65-րդ կետի համաձայն՝ Շուկայի օպերատորը ՇԿԾ-ում գրանցման հայտ ստանալուց հետո 1 աշխատանքային օրվա ընթացքում ստուգում է հայտի ամբողջականությունը և համապատասխանության դեպքում՝ ներկայացնում է այն էլեկտրական էներգիայի բաշխողին,

ժե) ԷՄՇ կանոնների 89-րդ կետի համաձայն՝ ԷՄՇ մասնակիցը պարտավոր է Շուկայի օպերատորին ծանուցել իր էլեկտրոնային վիրտուալ քարտում առկա տեղեկատվության անճշտությունների կամ տեղի ունեցած փոփոխությունների մասին: Շուկայի օպերատորը

վիրտուալ քարտում փոփոխությունները կատարում է կամ դրանց կատարումը մերժում է՝ ղեկավարվելով ԷՄՇ կանոնների 65-րդ և 66-րդ կետերով,

ժզ) ԷՄՇ կանոնների 7-րդ կետի համաձայն՝ ԷՄՇ մասնակիցը պատասխանատվություն է կրում ԷՄՇ-ում իր ներկայացրած տեղեկատվության հավաստիության համար,

ժէ) ԷՄՇ կանոնների 121-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ ԿՈՒՊ բաղադրիչում էլեկտրական էներգիայի գնման հայտ ներկայացնելիս հաղորդման կամ բաշխման ցանցին նոր միացած սպառողների դեպքում հիմք են ընդունվում միացման դիմումին կից ներկայացված փաստաթղթերում ու միացման պայմանագրում նշված՝ կանխատեսվող էլեկտրական էներգիայի սպառման ծավալների մասին ամսական տվյալները,

ժը) իրականացված վարչական վարույթի շրջանակում փաստվել է, որ Շուկայի օպերատորի կողմից չի ապահովվել ԿՈՒՊ բաղադրիչում էլեկտրական էներգիայի գնման հայտ ներկայացնելիս Նոր սպառողների դեպքում ԷՄՇ կանոնների 121-րդ կետի 2-րդ ենթակետով նախատեսված պահանջի կատարումը, այն է՝ հաղորդման կամ բաշխման ցանցին նոր միացած սպառողների դեպքում՝ միացման դիմումին կից ներկայացված փաստաթղթերում ու միացման պայմանագրում նշված՝ կանխատեսվող էլեկտրական էներգիայի սպառման ծավալների մասին ամսական տվյալների ներկայացնելը: Միաժամանակ, Շուկայի օպերատորի կողմից չի ապահովվել ԷՄՇ կանոնների 63-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված պահանջի կատարումը, մասնավորապես՝ «Տ-Մետալ» փակ բաժնետիրական ընկերության մասով չի ներկայացվել հաղորդման կամ բաշխման ցանցին միացման պայմանագիրը կամ կարգավիճակի վերաբերյալ հիմնավորումը, որի դեպքում կարող էր հաստատվել վերջինիս՝ էլեկտրական ցանցին միացված լինելու փաստը: Նշված պահանջների չապահովման արդյունքում խախտվել են ԷՄՇ մասնակիցների, այդ թվում՝ որակավորված սպառողների օրինական շահերը՝ զրկելով վերջիններիս մատակարարների կողմից ԿՈՒՊ բաղադրիչում ավել ձեռք բերված էլեկտրական էներգիայի չափով լրացուցիչ էլեկտրական էներգիա գնելու հնարավորությունից:

Ինչ վերաբերում է Շուկայի օպերատորի այն դիտարկմանը, որ Մատակարարներից յուրաքանչյուրը էլեկտրական ցանցին նոր միացած սպառման կետը իր հաշվեկշռման խումբ ընդգրկելիս դիմել է ԷՄՇ կանոնների 89-րդ կետի համաձայն, ապա այն չի կարող ընդունելի լինել, քանի որ ԷՄՇ կանոնների 89-րդ և 65-րդ կետերի բովանդակությունից ուղղակիորեն բխում է, որ ԷՄՇ մասնակցի պրոֆիլում փոփոխությունները պետք է

կատարվեն ընդհանուր կարգով և Մատակարարի կողմից իր հաշվեկշռման խումբ նոր սպառողի (հաշվառման կետի) ընդգրկումը բոլոր դեպքերում, անկախ նրանից տեղի է ունենում ԷՄՇ-ում նոր հայտ գրանցելիս, թե դրանում փոփոխության կատարման շրջանակում, պետք է իրականացվի միևնույն կարգավորման համաձայն, հակառակ դեպքում, տարակերպ մոտեցման կիրառումը ոչ միայն կլինի խտրական միևնույն կարգավիճակը ունեցող սպառողների նկատմամբ, այլ նաև ազդակ կհանդիսանա Մատակարարների կողմից համապատասխան փաստաթղթերի ներկայացման պահանջը շրջանցելու նպատակով իրենց հաշվեկշռման խումբ սպառողներին ընդգրկել միայն ԷՄՇ մասնակցի պրոֆիլում փոփոխության կատարման միջոցով:

Արդյունքում, ԿՈՒՊ բաղադրիչում Մատակարարների կողմից ըստ ամիսների ներկայացված էլեկտրական էներգիայի գնման հայտերի, ըստ ամիսների բաշխված էլեկտրական էներգիայի քանակների, վերջիններիս հաշվեկշռման խմբում գտնվող սպառողների սպառման համակարգերի ամրագրված հզորությանը համարժեք էլեկտրական էներգիայի քանակների և նրանց կողմից փաստացի սպառված էլեկտրական էներգիայի քանակների համադրմամբ՝ 2023 թվականի փետրվարից մինչև 2024 թվականի մարտ ամիսն ընկած ժամանակահատվածում՝

1. «Էներէքս» փակ բաժնետիրական ընկերությանը 2024 թվականի մարտ ամսվա համար 44329 կՎտժ ավելի էլեկտրական էներգիա է բաշխվել՝ «ԵՎՐՈՊԼԱՍՏ 999» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության մասով, ընդամենը՝ 44329 կՎտժ էլեկտրական էներգիա,

2. «Էներջի Սփփլայ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը 2023 թվականի օգոստոս, սեպտեմբեր և հոկտեմբեր ամիսների համար 307165 կՎտժ ավելի էլեկտրական էներգիա է բաշխվել «ՎԱՀԵԹ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության մասով և 2024 թվականի փետրվար ամսվա համար՝ 38494077 կՎտժ «Տ-Մետալ» փակ բաժնետիրական ընկերության մասով, ընդամենը՝ 38801243 կՎտժ էլեկտրական էներգիա,

3. «Էներջի Պրովայդեր» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը 2024 թվականի մարտ ամսվա համար 344 կՎտժ ավելի էլեկտրական էներգիա է բաշխվել՝ «ՍՊԱՅԿԱ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության Բագրատունյաց 70/11 սպառման կետի մասով, 2023 թվականի մարտ և ապրիլ ամիսների համար 70964 կՎտժ՝ «ՍՊԱՅԿԱ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության

Շենիկ սպառման կետի մասով և 2023 թվականի նոյեմբեր ամսվա համար 2979307 կՎտժ՝ «Ռիքաստ» սպառման կետի մասով, ընդամենը՝ 3050615 կՎտժ էլեկտրական էներգիա,

և հիմք ընդունելով Էներգետիկայի մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին և 11-րդ մասերը և «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. ԷՄՇ կանոնների 63-րդ կետի 2-րդ ենթակետով, 121-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված պահանջների խախտման համար Շուկայի օպերատորին տուգանել 1000000 (մեկ միլիոն) դրամ գումարի չափով:

2. Շուկայի օպերատորին՝

1) սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից մեկամսյա ժամկետում որոշման 1-ին կետով նախատեսված գումարը 900005242327 հաշվեհամարով փոխանցել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե.

2) սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից մինչև սակագնային տարվա ավարտը ԿՈՒՊ բաղադրիչում ներկայացվող էլեկտրական էներգիայի գնման հայտերը համամասնորեն նվազեցնել՝

ա. «Էներէքս» փակ բաժնետիրական ընկերության դեպքում՝ 44329 կՎտժ էլեկտրական էներգիայի չափով,

բ. «Էներջի Սփփլայ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության դեպքում՝ 38801243 կՎտժ էլեկտրական էներգիայի չափով,

գ. «Էներջի Պրովայդեր» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության դեպքում՝ 3050615 կՎտժ էլեկտրական էներգիայի չափով:

2. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում կարող է բողոքարկվել Հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան և դրա բողոքարկումը չի կասեցնում որոշման գործողությունը կամ կատարումը, բացառությամբ «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքով նախատեսված դեպքերի:

3. Սույն որոշումը սահմանված ժամկետում կամովին չկատարելու դեպքում ենթակա է հարկադիր կատարման «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքով սահմանված կարգով:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Շուկայի օպերատորին օրենքով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ

ք. Երևան
--- մայիսի 2024թ.